ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ

Լեոնարդո դա Վինչին (1452-1519 թթ.)

Լեոնարդո դա Վինչին աշխարհին հայտնի է որպես հանճարեղ նկարիչ: Սակայն, ինչպես վերածննդի դարաշրջանի շատ մտածողներ, նա նշանակալի ավանդ ունի նաև գիտության ու տեխնիկայի զարգացման մեջ: Նա է մաթեմատիկայում ներմուծել «–» և «+» նշանները, Լավուազեից 300 տարի առաջ ենթադրություն արել «կենսական օդի»՝ թթվածնի գոյության մասին: Նա կասկածի տակ է առել Երկրի անշարժության տարածված գաղափարը, նախագծել է թռչող սարք՝ նմանակելով թռչնի թևերի կառուցվածքը: Ստեղծել կամ նախագծել է բազմաթիվ մեխանիզմներ՝ զսպանակային ավտոմոբիլ, թնդանոթներով տանկ, կախովի կամուրջի մոդել, քամու արագությունը չափող գործիք, հիդրավլիկ տուրբին, էքսկավատոր, պարաշյուտ, հրշեջ շարժական սանդուղք և այլն, և այլն:

Չափազանց հետաքրքիր և ուսանելի են Լեոնարդոի անձի մասին տեղեկությունները: Ժամանակակիցները նշում են, որ հսկայական ուժի տեր՝ նա մասնակցում էր բոլոր մրցախաղերին, հրաշալի լողորդ էր, սուսերամարտիկ, հեծյուր, սրախոս, բանաստեղծ, երաժիշտ, երաժշտական գործիքների կոնստրուկտոր, արվեստի տեսաբան, մաթեմատիկոս, մեխանիկ, ինժեներ, աստղագետ, երկրաբան, բնագետ... Էլ ի՞նչ մնաց: